Dr. Walter Niess. Romanische Steinmetzzeichen der Stauferburgen Büdingen und Gelnhausen. Büdingen, 1988, 160 S.

Հայկական ճարտարապետության պատմության կարևորագույն օղակներից մեկը՝ միջնադարյան հայ քարգործ վարպետների նշանները, անհասկանալի պատճառներով հանիրավի չեն արժանացել մեր գիտական ճարտարապետների հետևողական ուշադրությանը։ Առաջին անգամ քարգործ վարպետների արվեստն ուսումնասիրել է Թորոս Թորամանյանը, իսկ այնուհետև հայկական մոնումենտալ հուշարձանները հետազոտող ոչ բոլոր մասնագետներն են փորձել իրենց հետազոտություններում անդրադառնալ նաև քարգործ վարպետների արվեստին, ինչը հանգեցրել է նրան, որ քարգործ վարպետների արվեստը չի ստացել գիտական գնահատական, կառուցող վարպետների ոճաստանքի որակական արժեքը անորոշ է, չի թվագրված ամբողջ կառույցը կամ նրա առանձին մասերը։

Հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրությամբ զբաղվողների համար կարևոր և հետաքրքրական նորություն կարելի է համարել դոկտոր Վալտեր Նիսի՝ ԳՖՀ-ում 1988 թ. հրատարակված «Բյուդինգեն և Գելնհաուզեն դղյակների (ամրոցների) ռոմանական քարգործ վարպետների նշանները» ուսումնասիրությունը։

Վալտեր Նիսի ուսումնասիրությունն սկսվում է համառոտ ակնարկով՝ նվիրված այն աշխատություններին, որոնցում լուսաբանվում են քարգործ վարպետների նշանները։ Ըստ աշխատություններից մեկի հեղինակի՝ Շվարցի, տարբեր են քարգործ վարպետների նշանները։ Այսպես՝ Ստրասբուրգի գերմանական հնագույն շինարարական կազմակերպության քարգործ վարպետների նշանը քառակուսին է, Քյոլնի վարպետներինը՝ եռանկյունին, Վիեննայի քարգործներինը՝ քառակուսին, որի մեջ ընդգծված են չորս կիսաշրջան, իսկ Բեռնի և Պրագայի վարպետների նշանը իրենից ներկայացնում է իրար հետ կապված երեք կիսաշրջաններ։ Ուշագրավ է Շվարցի այն միտքը, թե քարգործ վարպետների նշանների օգնությամբ ոչ միայն կարելի է քննել նրանց աշխատանքների կատարման որակը, ծագումը, այլև կարելի է որոշել քարգործ վարպետների ծագումը։ Շվարցը որոշ վարպետների նշանների մեջ տեսնում է խորհրդանշաններ. շրջանակը համարում է հեթանոսության և աստվածային ուժի խորհրդանշան, նաև՝ հավերժության և քրիստոնեության. հավասարանիստ եռանկյունին՝ եգիպտական աստվածների, անսահմանության խորհրդանիշ է դիտում. քառակուսին՝ աշխարհի և բնության, հեթանոսության և քրիստոնեական կրոնի խորհրդանշաններ։

Մեկ այլ աշխատանքի հեղինակ՝ Ալֆրեդ Ցապելը գտնում է, որ քարգործ վարպետների նշանների լուծությունը հասկանալի չի լինի, եթե չուսումնասիրվեն քարգործ վարպետների մասնագիտացված ընկերություն-կազմակերպությունները, նրանց աշխատանքային կարգերը։ Ավելորդ չի լինի բերել հեղինակի նաև այն դիտարկումը, ըստ որի եգիպտական, պարսկական, պարթևական վարպետների նշանները երկրաչափական պատկերներ են՝ շրջանագիծ, քառակուսի, խաչ, եռանկյուն։ Նրանք միևնույն ժամանակ օգտագործել են հունական և հռոմեական տառերը։ Ավելի ուշ՝ ռոմանական ժամանակներում օգտագործել են երկրաչափական պատկերներ։

Քարգործ վարպետների նշանների առկայությունը Եվրոպայում կապված է նաև խաչակիրների արշավանքների հետ, որոնք, ի վերջո, հանգեցրին Արևելք-Արևմուտք մշակութային կապերի ստեղծմանը և զարգացմանը։

Հայտնի է բյուզանդացի շինարար վարպետների և արվեստագետների գործունեությունը Իտալիայում ու Եվրոպայի այլ երկրներում։ Հեղինակը գտնում է, որ Բյուզանդական կայսրության ճարտարապետական-շինարարական գործունեության ասպարեզում ակտիվ մասնակցություն են ունեցել և հայ շինարարներն ու արվեստագետները, որոնք շուտով միացան խաչակիրների արշավանքներին՝ ընդդեմ իսլամի։

Վիսբադենցի հայտնի գիտնական դոկտոր Արա Բերբյանը դրախոսվող ուսումնասիրության հեղինակին է տրամադրել երեք մենագրություն (այդ թվում նաև՝ «Հայկական ամրարտակաշինությունը միջնադարում», տպագրված 1976 թ. Դարմշտատում), որոնցում բերված են միջնադարյան քարգործ վարպետների նշանները։ Սրանց ուսումնասիրությունը Վալտեր Նիսին բերել է այն եզրակացության, որ Հայաստանում քարգործ վարպետների նշանները երևան են եկել դեռևս VI դարից և գոյատևել են մինչև XIII դարը, իսկ Գերմանիայում քարգործ վարպետների նշանները ի հայտ են եկել XI դարում։ Համեմատելով հայ վարպետների նշանները Եվրոպայի ռոմանական նշանների

հետ, հեղինակը դարմանալի նմանություն է տեսնում նրանց միջև։ Ի լեպ, պիտի նկատել, որ ժամանակակից հայ մասնագետները ռոմանական քարգործ վարպետների նշանների մեջ տեսնում են հայկական տարրեր։

Դոկտոր Վալտեր Նիսը բերում է տեղեկություններ Ա. Բերքյանի, Մյուլեր-Վիների, Հելենքեմպերի և այլոց աշխատություններից, որոնք վկայում են XI—XIII դդ. հայերի և խաչակիրների փոխհարաբերությունների մասին։ Դա հաստատում է նաև Միջին Եվրոպայի պաշտպանական կառույցների շինարարությունը, որում ընդգծվում է հատկապես հայ վարպետների մասնակցությունը։

Վերոհիշյալ հեղինակներից մեկի մի աշխատության մեջ նշվում է, որ դալով Եվրոպա, խաչակիրները իրենց հետ բերում են ավելի քան 100000 հայեր (Թողնելով Երուսաղեմը Սալահեդդինի ձեռքում)։ Նրանց մեջ եղած հայ քարգործ վարպետները մնում են Իտալիայի հարավում։ Բարիում, Սուերո դղյակի վրա կարելի է տեսնել նրանց նշանները։ Պատմական մի տեղեկություն գիտենք, որ XII դարի վերջում Սիցիլիայի դրավումից հետո մեծ թվով գերիներ (որոնց թվում հավանաբար նաև հայեր) աքսորվում են Գերմանիա. նրանց օգնությամբ Գերմանիայում կառուցվում են ամրոցներ։

Վալտեր Նիսը դանում է, որ հարավային Իտալիայի դղյակ-ամրոցները կառուցած քարգործ վարպետների նշանները նման են Բյուդինգենի և Գելնհաուզենի դղյակ-ամրոցները կառուցած ռոմանական քարգործ վարպետների նշաններին։ Իր տեսակետը համոզիչ դարձնելու համար Վ. Նիսը ներկա ուսումնասիրության մեջ «Քարգործ վարպետների նշանները» բաժնում Պետեր Նիսի «Բյուդինգենյան քարգործ վարպետների արվեստը» աշխատությունից բերում է համապատասխան նյութեր, որոնք հաստատում են իր նկատառումները։

Հայաստանի ճարտարապետական հուշարձաններին դրոշմած քարգործ վարպետների նշանների ուսումնասիրությանը մեծապես կարող է նպաստել դոկտոր Վալտեր Նիսի աշխատության հետազոտական խորը, բաղմակողմանի մոտեցումը և ուսանելի եղանակը։ Հեղինակը տալիս է ուսումնասիրվող հուշարձանների ներքին և արտաքին ճակատների չափագրությունը, որոնց վրա նշված են վարպետների նշանները։ Հետաքրքրական է նշանների աղյուսակը, որի ուսումնասիրությունից պարզ են դառնում նշանների քանակը, ձևերը, տարբեր վայրերի վարպետների մասնակցությունը, վարպետների աշխատանքի որակը և մասնագիտական մակարդակը։ Հեղինակը ձգտել է որոշել նշանների պատմական արմատները և ոճական յուրահատկությունները։ Ուսումնասիրության վերջում Վ. Նիսը ներկայացնում է XI—XIII դդ. գերմանական 47 հուշարձանների վրա եղած քարգործ վարպետների նշանների մի ամփոփիչ աղյուսակ, որը ցույց է տալիս այս կամ այն նշանի ձևերի տարածումը, տեղեկություններ ենք քաղում վարպետների ծագման, հուշարձանների թվագրման վերաբերյալ։

Գրքի իլլյուստրատիվ նյութերի որոշակի մասը պարունակում է մի շարք ճարտարապետական մանրամասներ, որոնց զուգահեռները հանդիպում են միջնադարյան Հայաստանի մոնումենտալ ճարտարապետության մեջ։ Այդ նյութերում տեղ են գտել Գելնհաուզենի, Սրպլիտի (Հարավսլավիա), Մանֆրեդոնիայի (Իտալիա) դեկորատիվ սալերի մոտիվները և այլն։ Այս փաստը թույլ է տալիս նկատել միջնադարյան հայ ճարտարապետության և ռոմանական ճարտարապետության միջև եղած ընդհանրություններ։ Ընդհանրություններ են նկատվում նաև ճարտարապետական կառուցվածքների միջև։ Ուշագրավ է Վալտեր Նիսի բերած այն փաստը, թե Գերմանիայում ու եվրոպական այլ երկրներում սրբատաշ երեսով քարը հայտնվել է խաչակրաց երկրորդ արշավանքից (1147—1149) հետո՝ Երուսաղեմի Դավթի քարաշեն աշտարակի շինության ազդեցությամբ։

Վալտեր Նիսի ուսումնասիրության մեջ դրանում ենք շատ հրատապ մի հարց ևս. նա մասնագետների ուշադրությունն է հրավիրում քարգործ վարպետների ստեղծած արվեստի գործերի պահպանության վրա։ Ներկայիս էկոլոգիական վատթար պայմանները կարող են խիստ բացասաբար անդրադառնալ քարգործ վարպետների թողած նշանների վրա։ Նրանք կարող են ժամանակի ընթացքում կորցնել իրենց գծային հստակությունը։ Հեղինակը բերում է այդ երևույթի արդեն իրողություն դարձած փաստեր։ Պարզվում է, որ 1965 թ. գերմանացի գիտնական Գ. Բինդինգի կողմից ուսումնասիրված քարգործ վարպետների նշանները արդեն 1988 թ. կորցրած են եղել իրենց սկզբնական տեսքը՝ անբարենպաստ էկոլոգիական միջավայրի պատճառով։

Այդ առումով շատ օգտակար կլինի զբաղվել միջնադարյան Հայաստանի քարգործ վարպետների նշանների ուսումնասիրությամբ։

Ա. Խ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ